Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«22» օգոստոսի 2022 թ. թիվ 171 նիստում
ՀՀ ԳԱԱ/ԳԿՄԿ տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ԿԱՐԳ
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ
(Նոր խմբագրությամբ)

Երևան-2022

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Մագիստրոսական թեզը ինքնուրույն հետազոտական, վերլուծական և/կամ կիրառական նշանակության ավարտուն աշխատանք է, որն արտացոլում է տվյալ մասնագիտական ոլորտում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու կարողությունները, ինչպես նաև գիտական խնդիրներ բարձրացնելու և նոր լուծումներ առաջադրելու հմտությունները:
1.2 Մագիստրոսական թեզի կատարումը և հրապարակային պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի ավարտական պահանջներից են:
1.3 Մագիստրոսական թեզը մագիստրոսի կրթական ծրագրի անհատական և ամփոփիչ բաղադրիչն է, որի պատրաստումը և պաշտպանությունն առկա ուսուցման դեպքում իրականացվում են 2-4-րդ կիսամյակներում[1], իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 3-5-րդ կիսամյակներում: Բոլոր ուսանողները, համաձայն ժամանակացույցի (տես Աղյուսակ 2), պետք է ունենան թեզի թեմաներ և հրամանագրված ղեկավարներ: Թեզի պատրաստման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 15 կրեդիտ աշխատածավալ:

2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԹԵՄԱՅԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍՏԱՏՈՒՄ, ԹԵՄԱՅԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2.1 Մագիստրոսական թեզերի թեմաները առաջադրում են տվյալ կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի կամ ամբիոնների դասախոսները: Թեմաների վերջնական ցանկը հաստատվում է ամբիոնի նիստում կամ ամբիոնների համատեղ նիստում, եթե տվյալ կրթական ծրագիրն իրականացնում են մեկից ավելի ամբիոններ:
2.2 Առաջարկվող թեմաների քանակը առնվազն 30 տոկոսով պետք է գերազանցի մագիստրոսական թեզ կատարող ուսանողների թիվը և չկրկնի նախորդ երեք տարվա թեմաները:
2.3 Մագիստրոսական թեզի թեմաներն ընտրվում են ԳԿՄԿ ամբիոններում՝ հաշվի առնելով դասավանդող դասախոսների, համապատասխան ոլորտի մասնագետների, բացառիկ դեպքերում՝ նաև սովորողների առաջարկները, եթե դրանք հիմնավորված են և համապատասխանում են մասնագիտությանը: Թեման հաստատվում է միայն համապատասխան ղեկավար ապահովելու դեպքում:
2.4 Միևնույն թեմայի ընտրությունը տարբեր մագիստրանտների կողմից արգելվում է: Եթե նույն թեմային հավակնում են մեկից ավելի մագիստրանտներ, ապա նախապատվությունը տրվում է թեման առաջինն ընտրած ուսանողին:
2.5 Սովորողները մագիստրոսական թեզերի թեմաները ընտրում են՝
   2.5.1 1,5 և 2 տարի ուսման տևողության դեպքում՝ մինչև 1-ին կուրսի 1-ին կիսամյակի ավարտը.
   2.5.2 հեռակա ուսուցմամբ՝ մինչև 1-ին կուրսի 2-րդ կիսամյակի ավարտը (2,5 տարի ուսման տևողության դեպքում).
2.6 Սովորողների կողմից ընտրված մագիստրոսական թեզերի ցանկը հաստատվում է

[1] *Բացառությամբ «Իրավագիտություն», «Գործարար վարչարարություն (Կառավարում)», «Ֆարմացիա», «Ընդհանուր մանկավարժություն», «Քաղաքագիտություն», «Երկրաբանություն» մասնագիտությունների: Այս մասնագիտություններով թեզի պատրաստումը և պաշտպանությունը առկա ուսուցման դեպքում իրականացվում է 2-րդ և 3-րդ կիսամյակներում, իսկ հեռակա ուսոցման դեպքում 2-4րդ կիսամյակներում:*

ամբիոնում և նշանակվում են ղեկավարներ: Թեզի ղեկավար նշանակելիս հաշվի է առնվում ղեկավարի մասնագիտական ուղղվածությունը, տվյալ ոլորտում կատարած գիտական և գործնական գործունեությունը և աշխատանքային փորձը:

2.6.1 Թեզերի թեմաների հաստատված ցանկերի մեկական օրինակ պահվում է ամբիոնում և գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի մոտ:

2.7 Մագիստրոսական թեզի թեմայի կամ ղեկավարի փոփոխություն հնարավոր է մինչև ավարտական ուսումնական տարուն նախորդող ուսումնական տարվա ավարտը: Նման դեպքերում սովորողը կամ մագիստրոսական թեզի ղեկավարը սահմանված կարգով ամբիոնի վարիչին ներկայացնում է գրավոր դիմում (բողոք), որտեղ հստակ նշվում են դիմումի հիմքում ընկած հանգամանքներն ու հիմնավորումները:

2.8 Մագիստրոսական թեզի թեմայի կամ ղեկավարի մասին փոփոխության որոշումը կայացվում է ամբիոնի նիստում 10 (տասը) աշխատանքային օրվա ընքացքում և ներկայացվում է գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենին:

2.9 Յուրաքանչյուր ուսումնական տարի մագիստրոսական թեզի թեմաները ենթակա են վերանայման և չեն կրկնվում:

3. ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ

3.1 Գիտական ղեկավար կարող են նշանակվել Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական աստիճան ունեցող անդամներ, իրենց մասնագիտական ոլորտում գիտական և գործնական ներդրում ունեցող գիտնականներ, գիտահետազոտական հաստատությունների աշխատակիցներ: Որոշ դեպքերում կարող են նշանակվել նաև այն դասախոսները, ովքեր չունեն գիտական աստիճան, բայց կատարում են ակտիվ գիտահետազոտական աշխատանք կամ էլ համապատասխան բնագավառում ունեն աշխատանքային մեծ փորձ և դրսևորել են իրենց որպես բարձր որակավորում ունեցող մասնագետներ (ուսումնական տարում ղեկավարելով առավելագույնը 2 մագիստրոսական թեզ):

3.2 Գիտական կոչում ունեցող ղեկավարը կարող է ղեկավարել մինչև հինգ մագիստրոսական թեզ մեկ ուսումնական տարում, բայց ոչ ավել քան խմբի ուսանողների 40 տոկոսը:

3.3 Գիտական ղեկավարը պարտավոր է.

1. օգնել սովորողին՝ մագիստրոսական թեզի թեմայի շրջանակում կազմելու աշխատանքային պլան,
2. յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում երկու անգամ կազմակերպել խորհրդատվություն,
3. օգնել մեթոդաբանական հետազոտությունների ընտրության հարցերում՝ հետազոտական առաջադրված խնդիրներին լուծում տալու նպատակով,
4. սովորողին տրամադրել խորհրդատվություն՝ գրականության ընտրության հարցում,
5. սահմանել հսկողություն՝ հաստատված աշխատանքային պլանը ժամանակին իրականացնելու հարցում, ինչպես նաև սովորողին ժամանակին զգուշացնել հետազոտությունների որակի և ժամկետների անհամապատասխանության մասին,
6. գնահատել կատարված աշխատանքի համապատասխանությունը

մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին (ինչպես մաս-մաս, այնպես էլ՝ որպես մեկ ամբողջություն),

7. ներկայացնել գրավոր կարծիք՝ թեզը հրապարակային պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ՝ նշելով կատարված աշխատանքի համապատասխանությունը տվյալ կրթական ծրագրի պահանջներին, (հակիրճ ներկայացնելով թեզի կառուցվածքն ու բովանդակությունը, դրա արդիականությունը, տեսական մակարդակն ու գործնական կարևորությունը, առաջադրված խնդիրների լուծման խորությունն ու յուրահատկությունը, կատարված աշխատանքի ինքնուրույնությունը, գրականության օգտագործման աստիճանը), ինչպես նաև տալ եզրակացություն հրապարակային պաշտպանությանը թեզի պատրաստ լինելու կամ չլինելու վերաբերյալ,

8. մագիստրոսական թեզի վերաբերյալ ղեկավարի բացասական կարծիքի դեպքում թեզը չի թույլատրվում ներկայացնել հրապարակային պաշտպանության:

4. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4.1 Մագիստրոսական թեզի օրինակելի կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Մագիստրոսական թեզի օրինակելի կառուցվածքը և ներկայացվող պահանջները

Կառուցվածքը	Ներկայացվող պահանջները
Տիտղոսաթերթ	Տիտղոսաթերթը լրացվում է համաձայն Հավելված 1-ում ներկայացված ձևաչափի:
Ստորագրությունների էջ	Մագիստրոսական թեզի տիտղոսաթերթին հաջորդող էջում ստորագրում են ուսանողը, գիտական ղեկավարը և ամբիոնի վարիչը (տե՛ս Հավելված 2):
Բովանդակություն	Ըստ հերթականության ներկայացվում են թեզի բոլոր բաժինները, դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները, որոնք կցվում են թեզին:
Համառոտագիր	Տրվում են թեզի հայերեն և անգլերեն անվանումները, իսկ նպատակը, ստացված արդյունքները ներկայացվում են միայն հայերեն (միչև 1 էջ):
Ներածություն	Ներկայացվում են թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, գիտական և/կամ կիրառական նշանակությունը:
Հիմնական մաս	Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է գլուխներից և ենթագլուխներից: Այն ներառում է օգտագործված գրականության և ուսումնասիրվող հիմնախնդրի վերլուծությունը, կիրառված մեթոդների և կատարված հետազոտության նկարագրությունը, ուսումնասիրության արդյունքների շարադրումը և վերլուծությունը, մեկնաբանություններ և ամփոփում:

Եզրակացություններ (և առաջարկություններ)	Ներկայացվում են եզրակացությունները, որոնցում ամփոփվում են աշխատանքի նշանակալի արդյունքները: Կարող են ներկայացվել նաև առաջարկություններ:
Օգտագործված գրականության ցանկ	Նշվում է միայն այն գրականությունը, որն օգտագործվել է թեզը շարադրելիս, և որին համապատասխան հղումներ են արված:
Հավելվածներ	Առկայության դեպքում կցվում են թեզին:

4.2 Մագիստրոսական թեզի ձևավորման պահանջները

4.2.1 Մագիստրոսական թեզը պաշտպանության է ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր (կազմված) և էլեկտրոնային տարբերակներով: Թղթի չափը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2.0 սմ և ներքևից՝ 2.5 սմ: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին: Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ: Վերնագրերը և տեքստը շարվում են 12 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold) և գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմ խորքից: Թեզի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում՝ կենտրոնում: Համարակալումը սկսվում է բովանդակությունից, որը համարվում է 3-րդ էջ:

4.2.2 Աշխատանքում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները, հավելվածները և այլն համարակալվում են, և դրանց տրվում են անվանումներ (անհրաժեշտության դեպքում տրվում են նաև ծանոթագրություններ): Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են դրանց ներքևում, մեջտեղում՝ 10 pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում, իսկ հավելվածներինը՝ նոր էջի վերին աջ անկյունում:

4.2.3 Աշխատանքի վերջում տրվում է օգտագործված գրականության ցանկը: Ցանկում գրականությունը ներկայացվում է բնագրի լեզվով: Նախ նշվում են հեղինակի (ների) ազգանունը (ները) և անվան սկզբնատառը (երը), այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, հերթական համարը, էջերը կամ գրքի էջերի քանակը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանոթանալու ամսաթիվը (օրինակ, … // URL: http://www.info…, 14.06.2022):

4.2.4 Հղումները տեքստում տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի ([1], [2-5], [3, 7, 9-11], [3, էջ 15], [7, էջ 5-9]), կամ նշելով հեղինակի ազգանունը և հրատարակման տարեթիվը (Պողոսյան, 2015; Պետրոսյան և այլք, 2010), կամ տողատակում:

4.3 Մագիստրոսական թեզի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում է Կենտրոնը՝ ելնելով մասնագիտական առանձնահատկություններից. բնագիտական, տեխնիկական՝ 40-60 էջ, հումանիտար, հասարակագիտական՝ 60-80 էջ.

5. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՆԱԽԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Մինչև մագիստրոսական թեզի պաշտպանությունը Կենտրոնի ուսումնամեթոդական մասը համապատասխան մասնագիտական ամբիոնների հետ համատեղ կազմակերպում է նախնական պաշտպանություն՝ նախապես սահմանված ժամկետում:
5.2 Նախապաշտպանության նպատակն է օգնել մագիստրանտին՝ պատրաստվել պաշտպանությանը, ճիշտ կազմակերպել զեկույցը, օգտագործել դիդակտիկ նյութեր, ձեռք բերել հանրային ելույթի հմտություններ:
5.3 Մագիստրոսական թեզի նախապաշտպանությունն իրականացվում է համապատասխան գիտական կազմակերպությունում կամ Կենտրոնում՝ ամբիոնի վարիչի, մագիստրոսական ծրագրի ղեկավարների, ինչպես նաև ուսանողի գիտական ղեկավարի մասնակցությամբ:
5.4. Նախապաշտպանության ժամանակ ստուգվում է թեզի վերաբերյալ ելույթի կառուցվածքն ու բովանդակությունը, ելույթի համապատասխանությունը թեզի բովանդակությանը, ներկայացման որակը և ժամանակի կառավարումը:
5.5 Թեզի նախապաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում (աշխատանքում այլ աղբյուրներից առանց հղման, զգալի չափով օգտագործված ցանկացած նյութ (տեքստ) համարվում է գրագողություն) աշխատանքը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության:
5.6 Մագիստրոսական թեզի նախապաշտպանության ժամանակ աշխատանքի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսանողի տրվում է մինչև 30 րոպե ժամանակ:
5.7 Մագիստրոսական թեզի նախապաշտպանությունից հետո մագիստրոսական թեզը ներկայացվում է գրախոսության (ղեկավարի կարծիքի առկայության դեպքում), այնուհետև ամբիոն՝ թեզը հրապարակային պաշտպանության ներկայացնելու համար:
5.8 Մագիստրոսական թեզը մագիստրանտի կողմից ներկայացվում է թղթային և էլեկտրոնային տարբերակով:
5.9 Թեզի հրապարակային պաշտպանության ժամանակ աշխատանքի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսանողի տրվում է մինչև 15 րոպե ժամանակ:
5.10 Ուսանողին հանձնաժողովի անդամների կողմից տրվում են հարցեր ելույթից հետո՝ մինչև 15 րոպե:
5.11 Հանձնաժողովի հարցերին պատասխանելուց հետո ընթերցվում է մագիստրոսական թեզի վերաբերյալ գրախոսությունը, որից հետո լսվում է մագիստրանտի կարծիքը և պատասխանը դիտողությունների վերաբերյալ:
5.12 Մագիստրոսական թեզի գրախոսման կազմակերպման գործընթացը կազմակերպում է ամբիոնի վարիչը:
5.13 Հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:
5.14 Դրական գնահատված մագիստրոսական թեզերը պաշտպանության օրվանից հետո 3 տարի ժամկետով պահպանվում են Կենտրոնի արխիվում:

6. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

6.1 Մագիստրոսական թեզի պատրաստումը և պաշտպանությունն իրականացվում են Կենտրոնի մագիստրատուրայի ուսուցման համակարգի համար սահմանված ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի համաձայն (տե՛ս Աղյուսակ 2):

<u>Աղյուսակ 2</u>

Մագիստրոսական թեզի պատրաստման և պաշտպանության ժամանակացույց
Վերջնաժամկետ ըստ ուսման տևողության

Գործողություն	1,5 տարի	2 տարի	2,5 տարի
Մագիստրոսական թեզի թեմայի ընտրություն և հաստատում, գիտական ղեկավարի նշանակում	1-ին կիսամյակի ավարտ	1-ին կիսամյակի ավարտ	2-րդ կիսամյակի ավարտ
Թեզի առաջադրանքի և վերջինիս կատարման աշխատանքային պլան-ժամանակացույցի կազմում, հետազոտության պլանի մշակում, հետազոտության մեթոդների ընտրություն, գրականության վերլուծություն/մշակում և ներկայացում մասնագիտական ամբիոն ատեստավորման համար	2-րդ կիսամյակի ավարտ	2-րդ կիսամյակի ավարտ	3-րդ կիսամյակի ավարտ
Թեզի հետազոտական մասի կատարում և արդյունքների վերլուծություն, աշխատանքի քննարկում և հաղորդում գիտական սեմինարների ընթացքում, որոնց հիման վրա իրականացվում է ատեստավորումը	3-րդ կիսամյակի ավարտ, նոյեմբերի վերջ	3-րդ կիսամյակի ավարտ	4-րդ կիսամյակի ավարտ
Հետազոտության արդյունքների ամփոփում, թեզի հանձնում՝ ծրագիրն իրականացնող ամբիոն	3-րդ կիսամյակ, պաշտպանությունից առնվազն 5 շաբաթ առաջ	4-րդ կիսամյակ, պաշտպանությունից առնվազն 5 շաբաթ առաջ	5-րդ կիսամյակ, պաշտպանությունից առնվազն 5 շաբաթ առաջ
ա) գիտական ղեկավարի կարծիքի ներկայացում, թեզի նախապաշտպանություն, որոնց հիման վրա իրականացվում է ատեստավորում: բ) էական դիտողությունների առկայության դեպքում՝ աշխատանքի լրամշակում և ներկայացում մասնագիտական ամբիոն	3-րդ կիսամյակ. ա.պաշտպանությունից առնվազն 4 շաբաթ առաջ բ.պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ (դիտողությունների առկայության դեպքում)	4-րդ կիսամյակ. ա.պաշտպանությունից առնվազն 4 շաբաթ առաջ բ. պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ (դիտողությունների առկայության դեպքում)	5-րդ կիսամյակ. ա.պաշտպանությունից առնվազն 4 շաբաթ առաջ բ.պաշտպանությունից առնվազն 2 շաբաթ առաջ (դիտողությունների առկայության դեպքում)

Գրախոսականի ներկայացում մասնագիտական ամբիոն	3-րդ կիսամյակ, պաշտպանությունից առնվազն 3 օր առաջ	4-րդ կիսամյակ, պաշտպանությունից առնվազն 3 օր առաջ	5-րդ կիսամյակ, պաշտպանությունից առնվազն 3 օր առաջ
Թեզի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում	3-րդ կիսամյակի ավարտ	4-րդ կիսամյակի ավարտ	5-րդ կիսամյակի ավարտ

7. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

7.1 Մագիստրոսական թեզի գնահատումն իրականացվում է 20 միավորանոց սանդղակով՝ համաձայն սահմանված չափանիշների և դրանց համապատասխան չափորոշիչների (տե՛ս Աղյուսակ 3):
7.2 Ուսանողի արդյունարար միավորը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների նշանակած արդյունարար միավորների միջին թվաբանականն է:
7.3 Ուսանողի մագիստրոսական թեզը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ներկա են եղել տվյալ ուսանողի պաշտպանության ամբողջ ընթացքում:
7.4 Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատման արդյունքները հրապարակվում են ամփոփումից անմիջապես հետո՝ ուսանողների ներկայությամբ:

8. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

8.1 Մագիստրոսական թեզերի պաշտպանությունն անցկացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում:

8.2 Բացի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներից, ցանկալի է, որ մագիստրոսական թեզի պաշտպանությանը մասնակցեն նաև գիտական ղեկավարը և գրախոսը:

8.3 Մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առաջ քննական հանձնաժողովին ներկայացվում է փաստաթղթերի ցանկը (համապատասխան հրամաններ, շրջանավարտների ուսումնառությանը վերաբերող ամփոփիչ տվյալներ, մագիստրոսական թեզի ղեկավարի և գրախոսի(ների) կարծիքներ և այլն):

8.4 Մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները գնահատվում են Կենտրոնում գործող գնահատման սանդղակով և հայտարարվում նույն օրը՝ ուսանողների ներկայությամբ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո:

8.5 Գնահատման արդյունքների հրապարակումից հետո՝ հանձնաժողովի նախագահը ներկա ուսանողներին հարցնում է բողոքների առկայության մասին:

8.6 Ուսանողը գնահատման արդյունքների հրապարակումից հետո՝ բողոքի առկայության դեպքում, անմիջապես դիմում է ներկայացնում հանձնաժողովի նախագահին:

8.7 Բողոքարկումն իրականացվում է, եթե առկա են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» գործող կարգի ընթացակարգային դրույթների խախտումներ:

8.8 Մագիստրոսական թեզի պաշտպանության հանձնաժողովի բոլոր որոշումները համապատասխան քարտուղարի կողմից արձանագրվում են:

8.9 Մագիստրոսական թեզի պաշտպանությանը անբավարար գնահատական ստացած կամ պաշտպանությանը չներկայացած շրջանավարտին թույլատրվում է նոր պաշտպանություն՝ հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին՝ հաստատության սահմանած կարգով:

Աղյուսակ 3

Մագիստրոսական թեզի գնահատման չափանիշները, չափորոշիչները և հատկացվող միավորները

Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն_____

Թեզի թեման_____

Հանձնաժողովի անդամ՝ գիտ.աստ., կոչում, ազգանուն, անուն_____

Գնահատման չափանիշ/առավելագույն միավոր	**Չափորոշիչ**	**Հատկացվող միավոր**	**Ընդհանուր միավոր**
1. Թեմայի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը Առավելագույնը՝ 2 միավոր	1.1. Հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ձևակերպված է հիմնախնդիրը, սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները: Կատարված են թեմային առնչվող անհրաժեշտ գրակա- նության վերլուծություն և ամփոփում	□ - 2 □ - 1 □ - 0	
2. Հետազոտության իրականացումը և արդյունքները Առավելագույն միավորը՝ 6	2.1. Հետազոտությունը կատարված է ինքնուրույն՝ դրված խնդիրներին համապատասխան:	□ - 2 □ - 1 □ - 0	
	2.2. Ստացված արդյունքները հիմնավորված են և պարունակում են գիտական, մեթոդական կամ գործնական նորույթ	□ - 2 □ – 1 □ - 0	
	2.3. Կատարված է արդյունքների ամբողջական վերլուծություն, և արված են համապատասխան եզրակացություններ (նաև առաջարկություններ)	□ - 2 □ - 1 □ - 0	

3. Ձևակերպման որակը	3.1. Աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված: Աշխատանքի գլուխների և ենթագլուխների	□ - 2 □ - 1 □ - 0	

Առավելագույն միավորը՝ 4	բաժանումը և անվանումները համապատասխանում են բովանդակությանը		
	3.2. Աշխատանքը ձևավորված է ըստ տրված տեխնիկական պահանջների: Աշխատանքում առկա են հետազոտությունը և արդյունքները հիմնավորող հիմնական տվյալները (օրինակ՝ աղյուսակներ, նկարներ, սխեմաներ, մեջբերումներ և այլն)	□ - 2 □ - 1 □ - 0	
4. Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը Առավելագույնը՝ 8 միավոր	4.1. Զեկույցում հիմնավորվում են հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, ներկայացվում են մեթոդաբանությունը, աշխատանքի բովանդակությունը, արդյունքները և եզրակացությունները	□ - 2 □ - 1 □ - 0	
	4.2. Զեկույցը հստակ է և հետևողական, զեկուցողը կարողանում է փոխկապակցված ձևով ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել արդյունքները	□ - 2 □ - 1 □ - 0	
	4.3. Հարցերին և դիտողություններին զեկուցողը պատասխանում է հիմնավորված և սպառիչ	□ - 2 □ - 1 □ - 0	
	4.4. Ցուցադրական նյութն արտացոլում և պարզաբանում է աշխատանքի հիմնական բովանդակությունը	□ - 2 □ – 1 □ - 0	
Արդյունարար առավելագույն միավորը՝ 20			

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ [18 pt, Bold]

Անուն Ազգանուն Հայրանուն [18 pt, Bold]

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ [18 pt, Bold]

[18pt,Bold] ***Ամբիոնը կամ Մասնագիտությունը՝*** _____

[16pt,Bold] ***Կրթական ծրագիրը՝*** _____

[16pt,Bold] ***Թեման՝*** _____

_____

_____

[14pt,Bold]***«_____» մասնագիտությամբ _____մագիստրոսի որակավորման աստիճանի հայցման համար***

ԵՐԵՎԱՆ - 2022 [14pt,Bold]

ՀԱՎԵԼՎԱԾ 2*

Ուսանող՝ _____ [13 pt, Bold, Italic]

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Գիտական ղեկավար՝ _____ [13 pt, Bold, Italic]

ստորագրություն

_____

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«Թույլատրել պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ _____ [13 pt, Bold, Italic]

ստորագրություն

_____

գիտ. աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«_____»_____20__ թ.

---

* Տեղադրվում է որպես 2-րդ էջ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի ուսանող(ուհի)

_____-ի

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

_____

(թեմայի անվանումը)

մագիստրոսական թեզի վերաբերյալ[2]

1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը

_____

_____

_____

2. Հետազոտության իրականացումը և արդյունքները

_____

_____

_____

3. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը

_____

_____

_____

[2] Գրախոսը նախապես պետք է ծանոթ լինի ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրոսի կրթական ծրագրով մագիստրոսական թեզերի իրականացման և գնահատման կարգով սահմանված մագիստրոսական թեզի գնահատման չափանիշներին:

Դիտողություններ

_____

_____

_____

Եզրակացություն (աշխատանքը բավարարում է/չի բավարարում մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջները, հեղինակն արժանի է տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճանի շնորհմանը)

_____

_____

Գրախոս՝

_____

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

(գիտական աստիճան և կոչում)

_____

(աշխատանքի վայրը, պաշտոնը)

Ստորագրություն _____

«____»_____20___թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԾԻՔ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի ուսանող(ուհի)

_____-ի

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

(թեմայի անվանումը)

մագիստրոսական թեզի վերաբերյալ

1. Աշխատանքի արդիականությունը և կարևորությունը

_____

_____

_____

2. Ուսանողի՝ ինքնուրույն վերլուծություն և հետազոտություն կատարելու, տվյալներ մշակելու և հիմնավորված եզրակացություններ անելու կարողությունը

_____

_____

_____

3. Աշխատանքում գիտական, տեխնիկական, մեթոդական և/կամ գործնական նորույթ պարունակող տարրերի վերհանումը (առկայության դեպքում)

_____

_____

_____

4. Գործնական առաջարկությունների/երաշխավորությունների առկայությունը

_____

_____

_____

5. Կատարված աշխատանքի դրական կողմերը և թերությունները

_____

_____

_____

6. Թեզի ձևավորման համապատասխանությունը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրոսի կրթական ծրագրով մագիստրոսական թեզերի իրականացման և գնահատման կարգի պահանջներին

_____

_____

_____

Երաշխավորություն (աշխատանքը բավարարում է/չի բավարարում մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջները, աշխատանքն արժանի է ներկայացնել հրապարակային պաշտպանության)

_____

_____

Ղեկավար՝

_____

(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

(գիտական աստիճան և կոչում)

_____

(աշխատանքի վայրը, պաշտոնը)

Ստորագրություն _____

«____»_____20___թ.